Շմավոն Շմավոնյան. Անմիջական թրթիռ՝ ավարտուն աշխատանքներում

Շմավոն Շմավոնյանը հայտնի անուն է արդի հայ կերպարվեստում: Նրա շռայլ նկարչության հետքերին հանդիպել եմ թե՛ Հայաստանում, թե՛ ԱՄՆ-ում, թե՛ այլուր: Ընդ որում՝ և՛ անհատական հավաքածուներում, և՛ պետական-հասարակական հաստատություններում:
Նկարիչը դեռ փոքրուց է վառ երևակայություն ունեցել՝ թերևս պայմանավորված նաև Արարատի փեշերին փռված Վերին Արտաշատ գյուղում ծնված լինելու հանգամանքով: «Ապրում էինք Դվին հնավայրի կողքին,- պատմում է նկարիչը և շարունակում,- Այդ խորհրդավորությունը մինչ հիմա պահպանվել է մեջս»: Արմատներով Խոյից է ու Սալմաստից և հպարտ է մեծ գրող Ռաֆֆուն ազգակից իր նախնիներով:

Միաժամանակ հիշում է, որ չնայած շատ փոքր հասակից է էտյուդների գնացել, միևնույն է, բնությունն իր համար տակավին շատ գաղտնիքներ ունի պահած: Մեկ առ մեկ մտաբերում է նաև պատկերազարդ այն գրքերը, որոնց նկարները փորձել է ժամանակին արտանկարել: Ընդհանրապես Շմավոնն այն արվեստագետների թվին է պատկանում, որոնց մանկությունն իրենց ուղեկցում է հետագա ողջ կյանքում: Հենց դրա, ինչպես նաև շրջապատող բնության մեջ պետք է որոնել նրա ստեղծագործական ներշնչանքի ակունքները: Չէ՞ որ գորշ ասֆալտի վրա իսկական պոեզիա չի կարող ծնվել: Ընդ որում, պոեզիան միայն բանաստեղծություն կամ չափածո խոսք չէ, այլ հոգու վիճակ, որ կարող է արտահայտվել գործունեության ցանկացած ոլորտում: Կարծես հենց Շմավոնյանի վերաբերյալ է ասված հետևյալ իմաստուն միտքը. «Մանուկ հասակում գրեթե բոլորն են նկարում: Մեծանալուց հետո նկարիչ դառնում են լոկ նրանք, ովքեր շարունակում են աշխարհին նայել երեխայի աչքերով»:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ մանկության հուշերով է ողողված Շմավոն Շմավոնյանի ողջ ստեղծագործությունը: Հայրական տունը, մանկության բակը, հարազատ ծառերը պատկերող բազմաթիվ գործեր ունի նա: Ճիշտ է, նկարչի արվեստանոցը գտնվում է Երևանի կենտրոնում, սակայն նա շարունակում է ապրել գյուղում, իրեն շատ ավելի հոգեմոտ միջավայրում: Միգուցե դրանում է պետք տեսնել հայրենի բնությունն իր տարերքի մեջ ու նախաստեղծ գեղեցկությամբ ներկայացնող արվեստագետի հաջողության գաղտնիքը: Բնությունը նկարչի համար ամենևին էլ բնորդ չէ: Նա հոգու աչքերով և ամեն մի նյարդով է տեսնում ու զգում բնության յուրաքանչյուր նրբերանգն ու թրթիռը:

Սովորաբար այդ անմիջական թրթիռն առկա է լինում լոկ էտյուդային աշխատանքներում: Այն,

որպես կանոն, հաճախ հոդս է ցնդում, երբ նկարիչը շարունակ մշակում և ավարտին է հասցնում ստեղծագործությունը: Մինչդեռ Շմավոնյանի ավարտուն գործերում ևս պահպանված է այդ կենդանի թրթիռը, առաջին թարմ զգացողությունը: Դա՛ է նախ և առաջ գրավում ու երկար իր առջև գամում արվեստասերին:
Չնայած ստեղծագործական շուրջ 4 տասնամյակ ընդգրկող ուղուն՝ Շմավոնին այդպես էլ չլքեց մանկության տարիներին ձևավորված նրա վառ երևակայական աշխարհը: Ավելին՝ այսօր նա շարունակում է մնալ այդ աշխարհի լիիրավ բնակիչը, ով իր զգացողությունը փոխանցում է դիտողին, արվեստասերին, իր արվեստի անթիվ երկրպագուներին:
Բնական է, որ Շմավոնյանի ստեղծագործության մեջ գերակշռեին բնանկարները: Գեղեցիկ է, անշուշտ, մեր բնությունը: Վերջինս, սակայն, առավել գրավիչ ու դյութիչ է հնչում Շմավոնյանի կատարմամբ: Այո՛, այո՛, հնչում, քանի որ նրա կտավներում քարերն ասես երգում են, գույները՝ շնչում: Այսպես՝ «Երազ» ստեղծագործության կոմպոզիցիան, որ նկարից նկար հաճախ է կրկնվում, զառվառ ծաղիկներով չորս աղջիկ է պատկերում՝ լի դինամիզմով ու պարային ռիթմիկայով: Իսկ «Ջմեռ. իմ տունը» կտավը, հակառակ տարվա այդ եղանակով պայմանավորված սառը տոնայնության, դարձյալ տաք ու կարմիր երանգավորում ունի: Էլ չխոսենք նկարչի բազում Արարատների մասին, որոնք ամփոփվեցին 2013-ին տպագրված «Արարատապատում» պատկերագրքում:

Նատյուրմորտները ևս արվեստագետի բնանկարչության շարունակությունն ու անբաժանելի մասն են կազմում («Դաշտային ծաղիկ», «Գարնան ավետաբերը» և այլն): Վրձնի և մաստեխինի միաժամանակյա վարպետ գործադրման արդյունք են նկարչի անխտիր բոլոր աշխատանքները:
Ուրախ գույներով հատկորոշվող շմավոնյանական գունապնակը անտարբեր չի կարող թողնել ոչ մեկի: Պատահական չէ, որ տրամադրություն ստեղծող նրա նկարներից կազմված նոր օրացույցը հենց այդպես էլ կոչվում է՝ «Ուրախ գույներ-2018»: Նման պայծառ գունանկարչությունը բարձր է գնահատվում և մեծ պահանջարկ ունի նաև օտարազգի

արվեստասերների մոտ: Չէ՞ որ բնությունը սահմաններ չի ճանաչում, իսկ վառ գույները թարգմանության կարիք չունեն: Որքան էլ զարմանալի է, դեռևս հայրենիքում անհատական ցուցահանդես չբացած Շմավոնյանը նմանօրինակ բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել արտերկրում՝ Լիբանանում, Քուվեյթում, Արաբական էմիրություններում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլուր: Վերջին տարիների նրա այցելությունների հիմնական հասցեն, սակայն, Միացյալ Նահանգներն է:

Ամեն ինչ սկսվեց 1990թ. Գլենդելի Մեմորիալ առողջապահական հիմնադրամի հետ կնքած պայմանագրից: Ամերիկացի բժիշկներն արվեստի միջոցով բուժական մի ծրագիր էին իրականացնում, որը կոչվում էր «Միտք, մարմին և հոգի»: Նրանք մեր հայրենակցի աշխատանքներում տեսան իրենց ծրագրի կարևոր բաղադրիչներից, չասելու համար՝ բաղադրատոմսերից մեկը, և պատվիրեցին «Հույս» մեծաչափ կտավն իրենց հիվանդանոցի համար: Ահա թե ինչ է գրում նշյալ հիմնադրամի պատասխանատուներից Ջոյս Ռուդոլֆը. «Մենք ցանկացանք այնպիսի կտավ, որը մարդկանց դժվար իրավիճակներում հանգստություն ու խաղաղություն կբերի»:
Օրինակը վարակիչ ստացվեց: Շմավոնյանին այնուհետև նկատեցին Լոս Անջելեսի Սան Ժոզեֆ հիվանդանոցում: Ու հայ նկարիչն իր վառ գուներանգներով յուրատեսակ «բժիշկ» դարձավ հոգու ու մարմնի հավասարակշռությունը կորցրած ամերիկացիներից շատերի համար: 2010թ. Կալիֆոռնիա նահանգի մայրաքաղաք Սակրամենտոյի օրենսդիր մարմնին Շմավոնյանը նվիրեց մի մեծադիր կտավ՝ «Ծաղիկներ» անունով: Այն ասես Հայաստան աշխարհի ծաղկանկարը լինի, որի բույրն այդուհետ մշտապես տարածվելու է Սակրամենտոյից՝ հպարտությամբ լցնելով ամերիկահայերի սրտերը: Չմոռանանք նաև «Հավերժություն» նկարի մասին, որը ցուցադրվում է Գլենդելի քաղաքապետարանում:
Այս օրերին, երբ լրանում է ՀՀ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանի ծննդյան 65-ամյակը, մեր հայրենակիցը դարձյալ գտնվում է Ամերիկայում՝ արդեն Լոս Անջելեսի Պրովիդենս առաղջապահական կենտրոնի հրավերով: Արվեստագետի Ֆեյսբուքյան էջից ենք տեղեկանում հայկական գույներով արված նրա ամերիկյան բնանկարների մասին: Շնորհավորում ենք օվկիանոսի մյուս կողմում գտնվող մեր հայրենակցին՝ մաղթելով ստեղծագործական նոր ձեռքբերումներ:

Լևոն Լաճիկյան